# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**12 ՄԱՐՏԻ 2025 ԹՎԱԿԱՆ**

**ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

12 մարտի 2025 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 26 անդամներ:

Բացակա էին՝ Հերմոն Ավետիսյանը, Արմինե Սարգսյանը, Արմեն Եփրեմյանը, Արաքսյա Համբարձումյանը, Հովիկ Հովակիմյանը, Սոկրատ Հովսեփյանը, Իշխան Սահակյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Հրայր Հակոբջանյան, Սուրեն Մկրտչյան, Հրաչյա Հովհաննիսյան, Լյովա Ավետյան, Խորեն Ուստյան, Վարդան Այվազյան, Ատոմ Ատոմյան, Միեր Գևորգյան, Գոհար Հովսեփյան, Մերի Մելիքյան, Անահիտ Խաչատրյան, Արփինե Դավթյան, Արսեն Եփրեմյան, Նարեկ Գալստյան, Խորեն Հովակիմյան, Իշխան Թարվերդյան, Հովհաննես Հովհաննիսյան, Ավետիք Հարությունյան, Արմեն Ալեքսանյան, Արկադի Մանուկյան, Գևորգ Խաչատրյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար /1.1-1/՝ Գոռ Նազարյանը**

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)***

1.Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.4. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 349-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Շ.ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.6. «ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՍ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՄԻԿ ԼԱՅԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.8. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.9.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.10. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՓԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ/

1.11. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.12.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 04-Ի N 180-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.13. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 04-Ի N 182-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.14. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 370-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.15.ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ՝ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.16. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵԶԱՐԴ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,2587 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.17. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,35468 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.18. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,41345 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.19. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,17264 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.20. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,20391 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.21. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,47581 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.22. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,03927 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.23. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,73837 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.24. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԻԳՐԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 1,1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.25. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 158-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.26. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 322-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՄՈՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՂՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԱՆՈՒԿ ՔԱՋԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՐԻԶԱՎՈՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԱՆՈՒԿ ՔԱՋԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՂՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Խ. ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ.  ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ Պ. ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑ 24/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ.  ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.35.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՆՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ.  ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 33-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Ձեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն և 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշումները, Արարատի մարզպետի աշխատակազմի և Արտաշատ համայնքի միջև 2024 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված թիվ 24/ՍՆԿ-1 պայմանագրի՝ 2024 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված թիվ 1 համաձայնագիրը, Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները.

1) 11.01.02.51 գործառական դասակարգման / վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ 4891 հոդվածը պակասեցնել 23 020 864 / քսաներեք միլիոն քսան հազար ութ հարյուր վաթսունչորս /ՀՀ դրամով.

2) 05.01.01.51 գործառական դասակարգման / աղբահանություն և սանիտարական մաքրում/ 4213 հոդվածը պակասեցնել 15 000 000 /տասնհինգ միլիոն / ՀՀ դրամով.

3) 01.01.01.51 գործառական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում/ 4264 հոդվածը պակասեցնել 20 000 000 /քսան միլիոն /ՀՀ դրամով.

4) 04.05.01.51 գործառական դասակարգման /փողոցների պահպանում և շահագործում / 4216 հոդվածն ավելացնել 50 000 000 /հիսուն միլիոն / ՀՀ դրամով.

5) 09.01.01.51 գործառական դասակարգման / նախադպրոցական ուսուցում / «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 5 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 812 007/ ութ հարյուր տասներկու հազար յոթ/ ՀՀ դրամով.

6) 09.01.01.51 գործառական դասակարգման / նախադպրոցական ուսուցում / «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 398 301/ երեք հարյուր իննսունութ հազար երեք հարյուր մեկ / ՀՀ դրամով.

7) 09.01.01.51 գործառական դասակարգման / նախադպրոցական ուսուցում / «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 8 մանկապարտեզ » ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 503 393/հինգ հարյուր երեք հազար երեք հարյուր իննսուներեք / ՀՀ դրամով.

8) 09.01.01.51 գործառական դասակարգման / նախադպրոցական ուսուցում / «Արտաշատ համայնքի Մրգավետ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 388 064/ երեք հարյուր ութսունութ հազար վաթսունչորս/ ՀՀ դրամով.

9) 09.01.01.51 գործառական դասակարգման / նախադպրոցական ուսուցում / «Արտաշատ համայնքի Մրգավան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 282 075/ երկու հարյուր ութսուներկու հազար յոթանասունհինգ/ ՀՀ դրամով.

10) 09.01.01.51 գործառական դասակարգման / նախադպրոցական ուսուցում / «Արտաշատ համայնքի Բաղրամյան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 289 024/ երկու հարյուր ութսունինը հազար քսանչորս/ ՀՀ դրամով.

11) 01.06.01.52 գործառական դասակարգման / գույքի նկատմամբ իրավունքների գրանցում /4819 հոդվածն ավելացնել 348 000/ երեք հարյուր քառասունութ հազար / ՀՀ դրամով.

12) 09.08.01.51 գործառական դասակարգման / կրթություն այլ դասերին չպատկանող /4637 հոդվածն ավելացնել 5 000 000/ հինգ միլիոն / ՀՀ դրամով.

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 392-Ն որոշման 2-րդ, 3-րդ և 6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 34-Ն)*

**LՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն NN 1-5 հավելվածների և հավելվածներով ներկայացված ցուցանիշների ամփոփ վերլուծությունը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-1 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքում 2025 թվականի տեղական վճարների գծով կիրառել հետևյալ արտոնությունները՝

1.Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայություններից օգտվող երեխաների համար տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ արտոնություն սահմանել՝

1)Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայող եղբայր կամ քույր ունեցող, ինչպես նաև ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայող ծնող ունեցող երեխաների համար,

2) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար,

3) Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով Հայաստանի Հանրապետություն տեղափոխված, Արտաշատ համայնքում փաստացի բնակություն հաստատած ընտանիքների երեխաների համար,

4) ռազմական գործողությունների հետևանքով գտնվելու վայրն անհայտ համարվող զինծառայող եղբայր, քույր ունեցող երեխաների համար,

2.Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայություններից օգտվող երեխաների համար տեղական վճարի նկատմամբ 50%-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝

1) միակողմանի ծնողազուրկ (մահացած, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված) կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար,

2) 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաների համար,

3) հաշմանդամություն ունեցող երեխաների համար,

4) 4 և ավելի անչափահաս երեխա ունեցող, միաժամանակ ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների երեխաների համար,

5) նույն ընտանիքից համայնքային ենթակայության նույն նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող 3 երեխաներից 1 երեխայի համար,

3.Համայնքային ենթակայության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների ծառայություններից օգտվող երեխաների համար տեղական վճարների նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ արտոնություն սահմանել՝

1)Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայող ծնող, եղբայր կամ քույր ունեցող երեխաների համար,

2) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար,

3) Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով Հայաստանի Հանրապետություն

տեղափոխված, Արտաշատ համայնքում փաստացի բնակություն հաստատած ընտանիքների երեխաների համար,

4) ռազմական գործողությունների հետևանքով գտնվելու վայրն անհայտ անձ համարվող զինծառայող ծնող, եղբայր, քույր, ունեցող երեխաների համար, Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով Հայաստանի Հանրապետություն տեղափոխված, Արտաշատ համայնքում փաստացի բնակություն հաստատած ընտանիքների երեխաների համար,

5) հաշմանդամություն ունեցող երեխաների համար,

6) միակողմանի ծնողազուրկ (մահացած, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված) կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար,

4.Համայնքային ենթակայության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների ծառայություններից օգտվող երեխաների համար տեղական վճարի նկատմամբ 50%-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝

1) 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաների համար,

2) 4 և ավելի անչափահաս երեխա ունեցող, միաժամանակ ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների երեխաների համար,

3) ռազմական գործողությունների մասնակից ծնող ունեցող երեխաների համար,

4) նույն ընտանիքից համայնքային ենթակայության նույն երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ հաճախող 3 երեխաներից 1 երեխայի համար:

5. Արտոնությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) երեխաների օրինական ներկայացուցիչները,

2) Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենները:

6. Արտոնության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում կամ գրություն

2) երեխայի օրինական ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները,

3) տեղեկանք ՀՈԱԿ-ից, որտեղ հաճախում է երեխան,

4) տեղեկանք՝ ռազմական գործողությունների մասնակցության վերաբերյալ,

5) հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ (եթե երեխան կամ ծնողը հաշմանդամություն ունեն),

6) ընտանիքի սոցիալական կարգավիճակը հավաստող այլ անհրաժեշտ փաստաթղթեր (ծնողի մահվան վկայականի պատճեն, ընտանիքի անապահովության

միավորի վերաբերյալ տեղեկանք, բազմազավակ ընտանիքի անչափահաս երեխաների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները),

7) տեղեկանք երեխայի բնակության վայրի մասին:

7.Սույն որոշման 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերից որևէ մեկի բացակայությունը հիմք է դիմումը մերժելու համար:

8.Տեղական վճարի գծով, համայնքային ենթակայության յուրաքանչյուր կազմակերպության ծառայությունից օգտվելու համար կարող է սահմանվել տեղական վճարի նվազեցման միայն մեկ տեսակի արտոնություն:

9. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին տեղական վճարների գծով կիրառել արտոնություններ՝ սույն որոշմամբ սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

10. Սույն որոշմամբ սահմանված արտոնություններից կարող են օգտվել միայն Արտաշատ համայնքի բնակիչ հանդիսացող երեխաները:

11. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 36-Ն)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 349-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 4-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 349-Լ որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 37-Լ)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Շ.ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, և հիմք ընդունելով «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Շ.Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականություններ կատարող Նինել Գաբրիելյանի 12.02.2025 թվականի Պ-1856 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Շ.Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքից 46.3 ք.մ. մակերեսով տարածք, 2025 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ, անհատույց ժամանակավոր օգտագործման տրամադրել «ԴՈՒ ՄԵՆԱԿ ՉԵՍ» ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՄԱՆ հասարակական կազմակերպությանը՝ Արարատի մարզում «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ» ծրագիրը իրականացնելու նպատակով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում կողմերի միջև 2025 թվականի մարտի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 38-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***«ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Արարատի մարզի Բերդիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ/պ Գ. Սարգսյանի 13.02.2025 թվականի Պ-1967 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ «ՀՀ Արարատի մարզի Բերդիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին կից նախակրթարանի կառուցմանն աջակցելու նպատակով՝ Արտաշատ համայնքի

բյուջեից տրամադրելու 3.509.000 /երեք միլիոն հինգ հարյուր ինը հազար/ ՀՀ դրամ ֆինանսական հատկացում:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 39-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՍ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՄԻԿ ԼԱՅԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Մասիս գյուղի վարչական ղեկավար Գևորգ Խաչատրյանի 06 մարտի 2025 թվականի թիվ Պ-3115 գրությունը և հաշվի առնելով Արտաշատ համայնքի Մասիս գյուղի 8 փողոցի թիվ 7 տան բնակիչ Ռոմիկ Լայիկի Սարգսյանի 06 մարտի 2025 թվականի թիվ Ք-3116 դիմումը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.54 գործառնական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն հատկացնել Ռոմիկ Լայիկի Սարգսյանին՝ Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի վարչական տարածքում դժբախտ պատահարից տուժած եղբոր ընտանիքին օգնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 40-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 12-րդ հավելվածում 1013-1021-րդ տողերի ավելացմամբ կատարված փոփոխությունները՝ 06.12.2024 թվականին կնքված «ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-24/129» ծածկագրով պայմանագրին կից տեխնիկական բնութագրի համաձայն, որպես սեփականություն ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքին տրամադրված գույքի ձեռքբերմամբ պայմանավորված՝ (կամարներով միջանցք՝ 50*30*2 խողովակներով, լայնությունը՝ 5մ, բարձրությունը՝ 4մ, երկարությունը՝ 25մ), (տնակ՝ 3000*2000*2700 արտաքին չափերով), (հենայուներ բետոնե տակդիրներով /40*50*60/ խողովակի չափսը՝ 76մմ, բարձրությունը՝ 4 մետր), (ֆոտոզոնա՝ տնակի տեսքով), (ֆոտոզոնա՝ շրջանաձև), (մետաղյա կարկաս՝ զարդարված եղևնու ճյուղերով և խաղալիքներով, բարձրությունը՝ 3մ, լայնությունը՝ 3.5մ), (դեկոր՝ նամակի արկղ մետաղական, բարձրությունը՝ 1.5մ, լայնությունը՝ 60*60սմ), (արհեստական տոնածառեր՝ առնվազն 3մ բարձրությամբ, բնականին նմանվող, խիտ սաղարթով, իր խաղալիքներով, զարդարանքով)՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 41-Լ)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 12-րդ հավելվածում 1001-1013-րդ տողերի ավելացմամբ կատարված փոփոխությունները՝ Արարատի մարզի Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանի և «ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ի միջև 05.02.2025 թվականին կնքված «ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/145-1» ծածկագրով պայմանագրի համաձայն գույքի ձեռքբերմամբ պայմանավորված (ղեկավարի աշխատասենյակի կահույք, 1 հատ, արժեքը՝ 450000 (չորս հարյուր հիսուն հազար), (ղեկավարի աշխատասենյակի կահույք, արժեքը՝ 6225000 (վեց միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար), (ղեկավարի աշխատասենյակի կահույք, 1 հատ, արժեքը՝ 849996 (ութ հարյուր քառասունինը հազար ինը հարյուր իննսունվեց), (ղեկավարի աշխատասենյակի կահույք, 1 հատ, արժեքը՝ 600000 (վեց հարյուր հազար), (դռներ, 52քմ, արժեքը՝ 4263996 (չորս

միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր իննսունվեց), (սեղաններ, 1 հատ, արժեքը՝ 750000 (յոթ հարյուր հիսուն հազար), (ճեմասրահի-ընդունարանի կահույք, 1 հատ, արժեքը՝ 699996 (վեց հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ), (ճեմասրահի ընդունարանի կահույք, 1 հատ, արժեքը՝ 649992 (վեց հարյուր քառասունինը հազար ինը հարյուր իննսունվեց), (զգեստապահարաններ, 1 հատ, արժեքը՝ 549996 հինգ հարյուր քառասունինը հազար ինը հարյուր իննսուներկու), (դարակներով պահարաններ, 1 հատ, արժեքը՝ 199992 (մեկ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսուներկու), (փափուկ կահույք, 1 հատ, արժեքը՝ 549996 (հինգ հարյուր քառասունինը հազար ինը հարյուր իննսունվեց) (լրագրասեղան, 1 հատ, արժեքը՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար), (կահույքի մասեր, 1 հատ, արժեքը՝ 441996 (չորս հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 42-Լ)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՓԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 61-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Արտաշատ համայնքի ավագանու 12-ը փետրվարի 2025 թվականի N 13-Լ որոշմամբ ընդունված՝ Արտաշատ համայնքի ավագանու կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված դրույթները, համայնքի ավագանին **որոշում է.**

1.Ստեղծել Արտաշատ համայնքի ավագանու թվով 5 /հինգ/ մշտական հանձնաժողովներ և հաստատել 7 անդամներից բաղկացած հանձնաժողովների կազմը՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մաս կազմող հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 43-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 12-ի «Արտաշատ համայնքի Դեղձուտ գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող 0,03007 հա գյուղատնտեսական նշանակության հողամաս ուղղակի վաճառքի եղանակով օտարելու մասին» N 16-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետում «անջրդի» բառը փոխարինել «ջրովի» բառով:

2) Որոշման 2-րդ կետում «11728 (տասնմեկ հազար յոթ հարյուր քսանութ)» թվերը և բառերը փոխարինել «60667 (վաթսուն հազար վեց հարյուր վաթսունյոթ)» թվերով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 04-Ի N 180-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 04-ի «Արտաշատ համայնքի Աբովյան գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամաս աճուրդային եղանակով օտարելու մասին» N 180-Ա որոշման 1-ին կետում «03-005-0187-0041» թվերը փոխարինել «03-005-0187-0045» թվերով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 04-Ի N 182-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 04-ի «Արտաշատ համայնքի Արևշատ գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին» N 182-Ա որոշման 1-ին կետում «03-021-0135-0010» թվերը փոխարինել «03-021-0135-0011» թվերով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 46-Ա)*

**LUԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 370-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի «Արտաշատ համայնքի Այգեզարդ գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող 0,2660 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» N 370-Ա որոշման 1-ին կետում «03-009-0163-0007» թվերը փոխարինել «03-009-0163-0016» թվերով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 47-Ա)*

**LUԵՑԻՆ**

***ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ՝ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի՝ «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման 39-րդ կետի 1-ին ենթակետը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

